

ՀՐԱՄԱՆ N 278-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
«24» ՄԱՅԻՍԻ 2017 Թ. ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՐՊԵՍ ԿԱՄԱՎՈՐ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-48-Ն օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ կետի 9-րդ ենթակետը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1917-Ն որոշման հավելվածի 1-ի 10-րդ կետի «դ» ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի պետական ծառայությունում որպես կամավոր ներգրավելու պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ժամանակավոր
պաշտոնակատար՝**



ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ ՈՐՊԵՍ ԿԱՄԱՎՈՐ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ

«___» _____ թ.

(կնքման վայրը)

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի պետական
ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), ի դեմս Ծառայության ղեկավար

(անունը, ազգանունը, անձնագրի տվյալները)

որը գործում է ՀՀ արդարադատության պրոբացիայի պետական ծառայության
կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

(անունը, ազգանունը, անձնագրի տվյալները)

(այսուհետ՝ Կամավոր), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝
Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և այլ պայմանները.

1.1. Պայմանագրով՝ Կամավորը պարտավորվում է Ծառայության հանձնարարությամբ
կատարել Պայմանագրով նախատեսված պարտականությունները (այսուհետ՝
Պարտականություններ), իսկ Ծառայությունը պարտավորվում է Կամավորին տրամադրել
պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը.

1.2. Կամավորի կողմից կատարման ենթակա պարտականություններ են՝

(թվարկել պարտականությունները)

1.3. Որպես Կամավոր ներգրավվելու ժամկետն է՝ «___» _____թ. մինչև «___» _____թ.

1.4. Պայմանագրով նախատեսված Պարտականությունները իրականացվում են անհատույց:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կամավորն իրավունք ունի՝

2.1.1. Ծառայությունից պահանջել ու ստանալ անհրաժեշտ և ամբողջական տեղեկատվություն Պայմանագրով նախատեսված անհրաժեշտ Պարտականությունների կատարման համար.

2.1.2. ծանոթանալու Պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությանը և փաստաթղթերին.

2.2. Կամավորը պարտավոր է՝

2.2.1. պարտականությունները կատարել անձամբ՝ առանց դրանց կատարումը այլ անձին վերահանձնարարելու.

2.2.2. պարտականությունները կատարել պատշաճ որակով և ողջամիտ ժամկետում.

2.2.3. պահպանել իր Պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը.

2.2.4. պահպանել Ծառայության ներքին կարգապահական կանոնները.

2.2.5. պահպանել առողջության պահպանման և անվտանգության ապահովման հիմնական կանոններն ու նորմերը.

2.2.6. պահպանել և հարգել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները և այլ իրավական ակտերը.

2.2.7. հարգել մարդու արժանապատվությունը և ղեկավարվել մարդասիրության, արդարության և ազնվության սկզբունքներով՝ նպաստելով հասարակական վստահության և հարգանքի ձևավորմանը և ամրապնդմանը.

2.2.8. պարտականությունների կատարման ընթացքում Ծառայությանը դիտավորությամբ պատճառված նյութական վնասը հատուցել լրիվ ծավալով.

2.2.9. օգտագործել իրենց գործունեության առնչությամբ տրամադրված նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական գույքը և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվությունները բացառապես ծառայողական նպատակով.

2.2.10. պայմանագրում նախատեսված պարտականությունների իրականացման ընթացքում անհաղթահարելի խնդիրների առկայության դեպքում անհապաղ տեղեկացնել Ծառայությանը՝ ներկայացնելով խնդրի լուծման հնարավոր և նախընտրելի տարբերակը:

2.2.11. Ծառայության ղեկավարի պահանջով տրամադրել իր կողմից կատարված պարտականությունների վերաբերյալ հաշվետվություն:

2.4. Ծառայությունն իրավունք ունի՝

2.4.1. ցանկացած ժամանակ ստուգել Կամավորի կողմից կատարվող Պարտականությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

2.4.2. ստանալու տեղեկություններ Կամավորի կողմից իրականացվող Պարտականությունների վերաբերյալ:

2.5. Ծառայությունը պարտավոր է՝

2.5.1. ստեղծել Կամավորի պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ պայմաններ:

2.5.2. ապահովել Կամավորի աշխատանքի անվտանգության պահպանման նորմերը, մինչև աշխատանքի անցնելը Կամավորի հետ անցկացնել առողջության պահպանման, անվտանգության ապահովման հիմնական կանոնների և կատարվող աշխատանքների առանձնահատկությունների վերաբերյալ հրահանգավորում:

2.5.3. վերահսկել Կամավորի աշխատանքը:

3. Կողմերի պատասխանատվությունը եվ վեճերի լուծման կարգը

3.1. Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում Պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները խախտելու դեպքում:

3.2. Պայմանագիրը կարող է լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

3.3. Պայմանագիրը կարող է լուծվել կողմերից մեկի նախաձեռնությամբ Պայմանագրով ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում: Պայմանագրի լուծման վերաբերյալ առաջարկությունը մի կողմը մյուս կողմին ներկայացնում է պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն մեկ շաբաթ առաջ:

3.4. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից.

4.2. Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը երկու կողմերի համատեղ գրավոր համաձայնության դեպքում.

4.3. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կողմից.

4.4. Պայմանագիրը կազմված է հինգ էջից, կնքված է երկու հավասարազոր օրինակով՝ յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները և ստորագրությունները.

Ծառայություն

(հասցե)

(ստորագրություն)

Կ. Տ.

Կամավոր

(հասցե)

(ստորագրություն)

Կ. Տ.